Հայկ Շահբազյան

ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1880-1907 ԹԹ.

Բանալի բառեր - ֆիդայի, Արևմտյան Հայաստան, հայ ազատագրական շարժում, Օսմանյան կայսրություն, դաշնակցություն, Սասունի ապստամբություն, Անդրանիկ Օզանյան:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում խայտառակ պարտությունից հետո Օսմանյան կայսրության պետականորեն մշակված հայահալած քաղաքականությունն ավելի սաստկացավ: Հայ ազգաբնակչության մի մասը ստիպված լքում էր հայրենիքը, մի մասը համակերպվում էր ստեղծված իրավիճակի հետ, իսկ մնացած մասն էլ զենքը ձեռքին պայքարի էր ելնում օսմանյան բռնապետության դեմ: Այդ մարդկանցից ձևավորվեցին հայդուկային կամ ֆիդայական խմբեր, և տարերայնորեն ծավալվեց հայդուկային շարժումը: Դա մի նոր անհատական-պարտիզանական, վրեժխնդրական շարժում էր: Ֆիդայի կամ ֆեդայի արաբերեն բառ է. նշանակում է զոհ, հանուն գաղափարի նահատակվող մարդ: Այն 19-րդ դարի վերջին քառորդին և 20 դարի սկզբին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում թուրքական բռնապետության և թուրք-քրդական հարստահարողների դեմ պայքարող հայ ժողովրդական մարտիկների հավաքական անունն է: Ունի հոմանիշներ՝ հայդուկ (հունգարերեն՝ հետևակ), չետնիկ /Բալկաններում՝ տասնապետ/: Հայդուկներն այն վրիժառուներն էին, որոնք ելնում էին թուրք և քուրդ հարստահարիչների դեմ: Նրանք չունեին զորք, այլ գործում էին միայնակ, կամ խմբերով՝ թաքնվելով լեռներում, անառիկ վայրերում: Հարձակումներ էին գործում զորքերի կամ թալանչիների վրա, ընդ որում թուրքական զորքերի շարժման մասին տեղեկանում էին ժողովրդից:

Ֆիդայական շարժումը առաջացել է Արևմտյան Հայաստանում, հայ ազգային կուսակցությունների հրապարակ գալուց առաջ, տարերայնորեն, 1880-ական թվականների կեսին: Առաջին խմբերն ստեղծվել են Տարոնում, Վասպուրականում, Կեսարիայում և այլ վայրերում: Առավել հայտնի են Մարգար Վարժապետի (Մարգար Ամիրյան), Արաբոյի (Առաքել, Ստեփան Մխիթարյան), Ռուբեն Շիշմանյանի (Դերսիմի Քեռի), Գալուստ Արխանյանի (Մնձուրի Առյուծ), Արամ Աչըքպաշյանի (Գրիգոր Կարապետյան), Մինասօղլու (Հովհաննես Մինասյան) խմբերը, հայդուկապետ Թորոս Ծառուկյանը և ուրիշներ: Այս շրջանում ֆիդայիների որոշ ղեկավարներ (Արամ Աչըքպաշյան) փորձել են համաձայնեցնել կամ նույնիսկ միավորել անջատ-անջատ հայդուկային խմբերի գործողությունները: Սակայն շոշափելի արդյունքի չեն հասել: Չի իրականացել որոշ հայ գործիչների գաղափարը՝ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես քրդերի հետ դաշինք ստեղծելը:

Ֆիդայիներն զգալի աշխատանք են կատարել հայ ժողովրդի 2 հատվածների միջև կապերն ամրապնդելու համար, տեսակցել են արևելահայ նշանավոր գործիչների հետ, նրանց օգնությամբ զենք ու զինամթերք ձեռք բերել, կամավորներ հավաքագրել Արևմտյան Հայաստան ուղարկելու համար: Նրանք պատրաստ էին իրենց կյանքը զոհել հայրենիքի և ժողովրդի համար, լինել գաղտնապահ, ճշտախոս, բարոյապես բարձր, կրակել անվրեպ, չհայհոյել, ոգելից խմիչք չօգտագործել, բավարարվել համեստ սննդով, չվիրավորել միմյանց, հաղթել թշնամուն անգամ թվական գերակշռության դեպքում: Հայդուկներն իրենց մոտ պահում էին սպիտակ պատաններ՝ որպես ժողովրդի ազատագրության համար ամեն պահ զոհվելու խորհրդանշան: Ֆիդայիների խստակյաց ապրելակերպի սկզբունքները ներկայացրել է Ռուբեն Տեր-Մինասյանը իր հետևյալ աշխատություններում՝ «Հայ յեղափոխականի մը հիշատակները»[1] և «Հայ ֆիդայական շարժման պատմությունից»[2]:

Ֆիդայական շարժումը սկսվեց 1880-ականների սկզբներին և հաջողություններով ու ձախողումներով տևել է մինչև 1907թ.: Այդ շարժման ներսում ձևավորվել է երկու ուղղություն: Հարկ է նշել, որ այդ երկու ուղղությունները ազատագրական պայքարի սկզբնական (1880-ական թվականների երկրորդ կես) շրջանում շատ թույլ էին արտահայտվում և որոշակիորեն դրսևորվեցին 1890 - ական թվականների սկզբներին: Առաջին ուղղության կողմնակիցները համոզված էին, որ օսմանյան բռնապետության նկատմամբ հաղթանակի կարելի է հասնել միայն հանգամանորեն նախապատրաստված համաժողովրդական զինված ապըստամբության միջոցով[3]: Այս ուղղությունն ավելի հստակեցվեց Հրայր Դժոխքի (Արմենակ Ղազարյան) կողմից: Արմենակը հայդուկապետ էր, ազատագրական շարժման խորհրդանիշներից: Նա ծնվել է Սասունի Խուլփ գավառակի Ահարոնք գյուղում: Սովորել է Տարոնի Ղզլաղաճ գյուղի, Մշո Ս. Կարապետ վանքի դպրոցներում և Մշո Կեդրոնական վարժարանում: Եղել է ուսուցիչ, քաջածանոթ էր Սասունի ու Տարոնի հայերի վիճակին: 1891-1894թթ-ին Սասունի ինքնապաշտպանական մարտերի ղեկավարներից էր, աչքի է ընկել Տալվորիկի կռվում (1893): 1894-ի գարնանը մեկնել է Կովկաս՝ կամավորներ հավաքագրելու և զենք հայթայթելու: 1895-ին եղել է նաև Ռումինիայում և 50 հայ երիտասարդների հետ (նրանց թվում՝ Անդրանիկ Օզանյանը և Աղբյուր Սերոբը) վերադարձել Հայաստան: 1896-ին Բասենի Իշխու գյուղում ձերբակալվել է, տարվել Կարինի բանտ. ազատվել է ընդհանուր ներմամբ: Վերադարձել է Ղզլաղաճ և ձեռնամուխ եղել ընդհանուր ապստամբության կազմակերպմանը: 1903-04-ին մասնակցել է Սասունի ինքնապաշտպանական կռիվներին: 1904-ի ապրիլի 13-ին, երբ թուրքերի գերակշիռ ուժերը հարձակվել են Գելիգուզանի ուղղությամբ, Հրայրը ընկերներով փորձել է փակել նրանց ճանապարհը, բայց զոհվել է մարտում: Օգնության հասած Անդրանիկի զինվորները Հրայրին և մյուս զոհվածներին թաղել են Գելիեգուզանում:

Եթե, ինչպես նշեցինք, Հրայրը պաշտպանում էր ժողովրդական զանգվածային և համընդհանուր պայքարի գաղափարը, ապա Անդրանիկը կողմնակից էր ազատագրական շարժումը խմբային, ֆիդայական կռիվներով վարելուն[4]: Դա վկայում է

---

[1] Ռուբեն Տեր-Մինասյան, Հայ յեղափոխականի մը հիշատակները, հ. 3, Թեհրան, 1982:
[2] Ռուբեն Տեր-Մինասյան, Հայ ֆիդայական շարժման պատմությունից:
[3] Նույն տեղում, էջ 215:
[4] Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ֆիլիպե, 1905 թ:

Ռուբենը իր գրքերում՝ ասելով, որ «Մինչ Արմենակ ժողովրդական լայն կազմակերպուած յեղափոխութեան կը հաւատար, Անդրանիկ ընդհակառակն..իր ամբողջ յոյսը կը կապեր ընտրեալ ֆէտայիներու յեղափոխական գործունէութեան հետ»: Անդրանիկը և իր համախոհները՝ Գևորգ Չաուշը, Սեբաստացի Մուրադը, Սպաղանաց Մակարը, Աղբյուր Սերոբը, Գալեն, Չոլոն և ուրիշ ֆիդայիներ, պնդում էին, որ Արևմտյան Հայաստանում անհնար է համընդհանուր ժողովրդական ապստամբություն կազմակերպելը: Ըստ նրանց՝ ֆիդայիները, հենվելով ժողովրդի լայն աջակցության վրա, միայն տեղական կռիվներ վարելով, կարող են արևմտահայությանն ազատագրել բռնակալությունից: Անդրանիկը թեև խտրություն չէր դնում ազգերի միջև, սակայն կտրականապես դեմ էր Թուրքիայի մուսուլմանների հետ ցանկացած դաշինքին՝ դա համարելով անօգուտ ու պարապ զբաղմունք: Հրայրն ու իր կողմնակիցները գտնում էին, որ «ժողովուրդն է միակ հիմքը ժողովրդական լայն շարժման մը, որուն համար ան պետք է լրջորեն պատրաստուի...»[1]: Նկատենք, որ մինչև Հրայրը, Մկրտիչ Խրիմյանը, Ներսես Վարժապետյանը և Հակոբ Սարկավագը այդ ուղղությամբ որոշ գործնական քայլեր էին ձեռնարկել: Հակոբ Սարկավագը «լավագոյն յարաբերութիւներ մշակել էր քրդերի հետ»:

Անդրանիկը և Հրայրը, մարտավարական խնդիրների շուրջ միմյանց հակառակվելով, տարբեր տեսակետներ ունեին նաև ֆիդայիների կենսապայմաններին և ապրելակերպին առնչվող հարցերում: Եթե Հրայրը գտնում էր, որ հայդուկը պետք է չարքաշ կյանքով ապրի, ապա Անդրանիկը պնդում էր, որ «հայ մարտիկը, որ այսօր կա, վաղը՝ չկա, պիտի հագնված լինի շատ լավ, կոկիկ ու գեղեցիկ, իշխանի նման, իր հագուստ-կապուստով ու դիրքով պիտի ազդի ոչ միայն հայի, այլև նրա թշնամիների վրա, որպեսզի ոչ ոք չհանդգնի կարծել թե ֆիդայիները ողորմություն խնդրող խեղճ մարդիկ են»[2]: Անդրանիկը գտնում էր, որ ֆիդային պետք է լինի կուշտ և առողջ, որպեսզի «կռուի ժամանակ լոյս ունենայ իր աչքերուն մէջ, ուժ ունենայ իր ոտքերուն մէջ՝ տոկալու և քաջաբար կռուելու համար»[3]: Նա առարկում էր հակառակ թևի նաև այն պնդմանը, որ ֆիդայիները պետք է ենթարկվեն դաշնակցության կոմիտեներին, ասելով, որ «իրենց տուներուն մէջ նստած կոմիտէները չեն կրնար ղեկավարել լեռներու մէջ թափառող ֆէտայիները»[4]: Այս և նման մի շարք հարցերի շուրջ էին երկու ուղղությունների և նրանց ղեկավարների տարաձայնությունները:

Ինչպես տեսնում ենք, հայ ազատագրական շարժման երկու հեղինակավոր գործիչների հակասության հիմքում ընկած էր ոչ թե անձնականը, այլ պայքարի մարտավարության նկատմամբ մոտեցումների տարբերությունը: Շարժման երկու թևերը թեև հակադրված էին միմյանց, բայց, բարեբախտաբար, դա անհամաձայնություն էր և ոչ թե թշնամանք: Կարծում ենք, որ երկուսն էլ անհրաժեշտ էին և լրացնում էին մեկը մյուսին: Հետևաբար իրավացի էր Ա. Համբարյանը, ըստ որի՝ «խմբակային կռիվները միշտ վառ էին պահում ազատագրական պայքարի ոգին և զսպում էին պաշտոնյաների ու աղաների հայերի հանդեպ գործադրվող բռնություններն ու կեղեքումները, իսկ զանգվածներին նախապատրաստումը ազատագրական պայքարին կտար

[1] Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 3, Թեհրան 1982, էջ 199:
[2] Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Երևան 1996, հ. Ա, էջ 104:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 209:
[4] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 209:

կազմակերպված բնույթ»[1]: Չժխտելով ազատագրության մարտավարական խնդիրների հետ կապված Հրայրի տեսակետները և գաղափարները՝ հակված ենք նրան, որ Արևմտյան Հայաստանում դեռևս չկային այն պատմական ու քաղաքական պայմանները, որոնք Հրայրին և այդ ուղղության հետևորդներին թույլ կտային նախապատրաստել համընդհանուր ապստամբություն: Լրտեսների ու մատնիչների առկայության և պետական զանազան պաշտոնյաների աչալուրջ հսկողության պայմաններում անհնար էր զինել ժողովրդին և աննկատ մնալ կամ սպասել, որ օսմանյան լծի տակ հեծող մյուս հարևան ժողովուրդները և առաջին հերթին քրդերը հասնեն քաղաքական հասունության այնպիսի աստիճանի, որ դաշնակցեն հայերի հետ և կռվի դուրս գան օսմանյան բռնապետության դեմ: Տվյալ աշխարհաքաղաքական իրավիճակում թերևս իրական ճանապարհն Անդրանիկի մատնանշած ուղին էր: Ճիշտ է, այն ևս արդյունավետ լինել չէր կարող, սակայն այլ ելք չկար, քանի որ հապաղումը մահվան էր հավասար: Ավելին, անկախ գործելակերպից, միևնույն է, կոտորածները, արտաքսումը, ուծացումն ու բնաջնջումն ի կատար էին ածվելու: Դա արդեն մշակված պետական քաղաքականություն էր և պետք է կենսագործվեր: Ավելի ճիշտ էր վեհանձն կերպով զոհվել ազատագրության համար մղվող պայքարում, քան ոչնչանալ առանց դիմադրելու:

1880–90-ական թվականներին կովկասաբնակ և ռուսաստանաբնակ հայերի շրջանում մեծացել է հետաքրքրությունն արևմտահայերի ազատագրական պայքարի նկատմամբ, և ծավալվել է օգնության շարժումը: Հայ երիտասարդները (հիմնականում՝ ուսանողներ) Թուրքիային սահմանակից շրջաններում (Ալեքսանդրապոլ, Կարս, Երևան, Իգդիր, Ախալցխա և այլն) կազմել են հայդուկային խմբեր և, զենք ու զինամթերքով զինված, փորձել են անցնել Արևմտյան Հայաստան. հայտնի են Վարդան Գոլոշյանի, Սարգիս Կուկունյանի նախաձեռնությունները: Կազմակերպվել են նաև զինատար խմբեր, որոնք զենք են փոխադրել Ռուսաստանից, Այսրկովկասից, Իրանից:

1890-ական թվականների սկզբից Արևմտյան Հայաստանում նոր թափ են ստացել ազատագրական շարժումը, զինված ելույթներն ու ինքնապաշտպանական մարտերը՝ պայմանավորված հնչակյան և դաշնակցություն կուսակցությունների ստեղծումով ու Արևմտյան Հայաստանում դրանց տեղական կազմակերպությունների տարածմամբ: Ազգային կուսակցությունների հիմնական նպատակը Հայկական հարցի լուծումն էր՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը, ուստի նրանք տեղերում համագործակցել են հայդուկային խմբերի հետ՝ շարժմանը տալով համազգային բնույթ: Կուսակցությունները ֆիդայիներին նախապես համարել են իրենց մարտական ուժը, իսկ ֆիդայիները պատրաստ էին ընդունելու նրանց գաղափարական ղեկավարությունը: Ֆիդայիների՝ հնչակյաններին կամ դաշնակցականներին հարելը սկզբնական շրջանում պայմանավորված էր նրանով, թե այդ կուսակցություններից որն էր ավելի ազդեցիկ Արևմտյան Հայաստանի այս կամ այն շրջանում:

1890-ական թվականների 2-րդ կեսից դաշնակցությունը, հասարակական-քաղաքական կյանքում դառնալով գերիշխող, ղեկավարել է հայդուկային շարժումը, և

[1] Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արեւմտյան Հայաստանում 1898 -1908 թթ., Ե., 1999, էջ 189:

բազմաթիվ ֆիդայիներ դարձել են դաշնակցության անդամ: Շարժումը ծավալվել էր նաև Կիլիկիայում: Աբդուլհամիդյան ջարդերի ժամանակ (մեծ չափերի են հասել 1895–96 թթ-ին) ֆիդայիները գործուն մասնակցություն են ունեցել հայերի ինքնապաշտպանությանը Խլաթում, Սասունում, Վանում, Շապին-Գարահիսարում և այլուր: Ֆիդայիների հաջող գործողությունները նորից հույս են ներշնչել Արևմտյան Հայաստանում ընդհանուր ապստամբություն նախապատրաստելու և սկսելու, ինչպես նաև սուլթանական բռնության դեմ կայսրության բոլոր ճնշված ժողովուրդների միացյալ ճակատ ստեղծելու համար: Սակայն քրդերի հետ միություն կազմելու փորձն արդյունք չի տվել: Ավելին, Թուրքիայի կառավարող շրջաններին հաջողվել է իրենց կողմը գրավել քրդական ցեղերին ու ցեղապետերին՝ ընդդեմ հայերի:

Հայդուկային պայքարի նշանավոր դրսևորումներից են Բաբշենի (1898 թ.), Խաստուրի (1899 թ.), Սպաղանքի (1899 և 1900 թթ.), Ցրոնքի (1899 թ.), Բերդակի (1901 թ.), Նորշենի (1901 թ.), Առաքելոց վանքի (1901 թ.) կռիվները: Այս շրջանում մեծ համբավ ունեին ֆիդայիներ Աղբյուր Սերոբը (Սերոբ Վարդանյան), Անդրանիկ Օզանյանը, Գևորգ Չավուշը (Գևորգ Ղազարյան), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), Ժիրայրը (Հարություն-Մարտիրոս Պոյաճյան), Հրայրը (Արմենակ Ղազարյան), Սպաղանաց Մակարը (Մակար Տոնոյան), Վազգենը (Տիգրան Տերոյան), Գուրգենը (Բաղդասար Մալյան) և ուրիշներ:

Առաջին հայդուկներից էին Արաբոն, Մարգար վարժապետը, Կարապետը, Աչըէ-բաշյանը: Նրանք սկսել են իրեն գործունեությունը Տարոնում, Վասպուրականում, Փոքր Հայքում:

Արաբոն (Առաքել, Ստեփանոս Մխիթարյան, 1863 - 1893), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ է, առաջին ֆիդայիներից (1880-ականներին): Նա ծնվել է Բիթլիսի նահանգի Կուռթեր գյուղում: Սովորել է Մուշի Առաքելոց վանքի դպրանոցում: Գործել է Սասունի, Տարոնի գյուղերում: Ինքնապաշտպանության նպատակով կազմակերպել է զինված խումբ: 1882-ին թուրք իշխանությունները Բերդակ գյուղում ձերբակալել են Արաբոյին, դատապարտել 15 տարվա բանտարկության, սակայն փախել է բանտից, շարունակել իր գործունեությունը: 1889-ից սկսած՝ քանիցս այցելել է Կովկաս, 1892-ին Թիֆլիսում մասնակցել է ՀՅԴ կուսակցության 1-ին ընդհանուր ժողովին: 1893 թ. գարնանը Սասունի ապստամբներին օգնելու նպատակով Կարսից անցել է Երկիր: Բայց, ճանապարհին՝ խնուսից ոչ հեռու՝ Գյալառաշ (Սև բերդ) կոչվող ձորում ընդհարվել է քրդերի հետ և զոհվել իր հինգ ընկերների հետ:

1903 թ-ի գարնանը սահմանն անցած դաշնակցական մի քանի ջոկատներից միայն Թորգոմի (Թուման Թումյանց) և Մենակի (Եգոր Առուստամյան) «Մրրիկ» հեծելախմբին (33 մարդ) է հաջողվել մայիսի վերջին հասնել Սասուն: Սեպտեմբերի սկզբին Գերմանիայում սովորող Աբրահամյանը 50-հոգանոց զինված խմբով փորձել է անցնել սահմանը, սակայն ձերբակալվել է: Սեպտեմբերի 30-ին «Կայծակ» հեծելախումբը (53 մարդ) Բասենում ընդհարվել է թուրքական զորաջոկատի հետ:

1904 թ-ի մայիսի վերջին Աշոտ Երկաթի (Արմենակ Լևոնյան) և քղեցի Պողոսի (Թոխմախ) խումբը (35 մարդ) Իգդիրից Սասուն գնալիս Արճեշի Սոսկուն գյուղի մոտ ընդհարվել է քրդերի հետ, պաշարվել թուրքական կանոնավոր բանակի կողմից և զոհվել: Հունիսին Կայծակի (Վաղարշակ Բաղդասարյան) «Դժոխք» հեծելախումբը (29 մարդ) Արևմտյան Հայաստան անցնելիս Զևինի մոտ կռվի է բռնվել թուրք զին-

վորների ու քրդերի հետ և պարտվել: Նույն ամսին Նիկոլ Դումանի հեծելախումբը (18 մարդ), սահմանագլխին բախվելով թուրքական զինված ուժի հետ, ցրվել է և վերադարձել Իրան: Հուլիսի 24-ին 102-հոգանոց մի խումբ Գայլ Վահանի (Մինաս Տոլպաշյան) և Կապիտան Բաբկենի (Նիկողայոս Տեր-Խաչատրյան) ղեկավարությամբ անցել է սահմանը: Արևմտահայերին օգնության շտապող խմբերը կազմակերպվել են հապճեպ՝ առանց գործողությունների մշակված ծրագրերի, հաշվի չեն առնվել առկա պայմաններն ու հնարավորությունները, որոնք էլ դարձել են անհաջողությունների պատճառ: Եղել են նաև վրեժխնդրության և առանձին թուրքական ու քրդական խմբեր ոչնչացնելու նպատակով կազմակերպված հայդուկային արշավանքներ. առավել հայտնի է Խանասորի արշավանքը (1897 թ.): Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) ընդհանուր հրամանատարությամբ՝ արշավախումբը (շուրջ 275 մարդ) Խանասորի դաշտում վերացրել է քրդական մազրիկ ցեղը (բացի երեխաներից ու կանանցից), որից հետո հնարավոր են դարձել զենքի առաքումները Սալմաստ–Վասպուրական–Տարոն ուղղությամբ: Արշավանքի մասնակիցները հայտնի են «խանասորյան սերունդ», իսկ հրամանատարը՝ Խանասորի Վարդան անուններով:

Երիտթուրքական հեղաշրջումից (1908 թ.) հետո ֆիդայիներին ներում է շնորհվել, և նրանց մի մասն իջել է լեռներից ու անցել խաղաղ աշխատանքի: Առաջին աշխարհամարտի (1914–18 թթ.) սկզբին ֆիդայիների զգալի մասը մտել է հայկական կամավորական ջոկատների մեջ, իսկ Մեծ եղեռնի օրերին մասնակցել է հայերի ինքնապաշտպանական կռիվներին:

Ֆիդայական շարժման պոռթկում էր 1904 թվականի Սասունի ապստամբությունը, որի ընտրված ղեկավար մարմնի՝ զինվորական խորհրդի կազմում էին Անդրանիկը որպես ղեկավար, Գևորգ Չավուշը, Սեպուհը (Արշակ Ներսիսյան), Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան) և ուրիշներ: 20-րդ դարի սկզբին դաշնակցականները և հնչակյանները շարունակել են կազմակերպել հայդուկային ու զինատար խմբեր և տեղափոխել Արևմտյան Հայաստան՝ Այսրկովկասից ու Իրանից: Սակայն ճանապարհին նրանց խոչընդոտել են ինչպես թուրքերը, այնպես էլ ռուս սահմանապահները և հաճախ ձախողել այդ ձեռնարկումները:

Սասունի հայերին բնաջնջելու նպատակով թուրքական կառավարությունը 1904թ-ին խոշոր արշավանք է ձեռնարկում: 1904թ.-ի գարնանը քրդական զինված ուժերը արշավում են Խիանք և Խուլփ բնակավայրերի ուղղությամբ, սակայն ջախջախվում են: Դրանից հետո թուրքական 10 հազարանոց և քրդական 5 հազարանոց զորքը Քեոսե Բինբաշու գլխավորությամբ հյուսիսից Կեփ, Սեմալ, Խզըլաղաճ գյուղերի վրայով ներխուժել է Սասուն, մտել Ալիանք և Շենիկ: Այդ գծի պաշտպանությունը գլխավորել է Դժոխք Հրայրը (Արմենակ Ղազարյան): Տափըկ գյուղում հաստատվել է Անդրանիկի Օզանյանի ջոկատը՝ խանգարելով Գելիեգուզան շարժվող թշնամու առաջխաղացումը: Իշխանաձորի և Տալվորիկի պաշտպանական ուժերը գլխավորել է Գևորգ Չաուշը, իսկ Չայի գլուխ կոչվող շրջանը պաշտպանել են Հաճին (Հակոբ Կոտոյան), Սեբաստացի Մուրադը և Սպաղանաց Մակարը:

Ապրիլի 11-ին Շենիկի մոտ հակահարված ստանալով՝ թուրքական հրամանատարությունը հայերին առաջարկել է դադարեցնել դիմադրությունը: Ի պատասխան թուրքերի առաջարկի՝ սասունցիները պահանջել են իրագործել 1895թ.-ի «Մայիսյան

բարենորոգումները»: 1904.-ի ապրիլի 14-ին և 15-ին Մերկեր գյուղի շրջակայքում տեղի ունեցած համառ կռվում հայկական զինյալ ստորաբաժանումները թուրքական և քրդական զինված ուժերին ստիպել են նահանջել: Սասունի ինքնապաշտպանական ուժերը և մոտ 20.000 խաղաղ բնակչություն տեղափոխվել են Գելիեգուզան, որտեղ ապրիլի 17-ին տեղի ունեցած մարտում կրկին պարտության են մատնել հակառակորդին: Երկու օր անց 12 հրանոթների գնդակոծության ուղեկցությամբ թուրքական զորքերն անցել են նոր գրոհի: Մի քանի օր հերոսաբար դիմադրող հայերը զինամթերքը սպառվելու պատճառով թողել են Գելիեգուզանը և Ալուճակի բարձունքները: Անզեն ժողովուրդն նահանջել է Մշո դաշտ, իսկ ֆիդայիները մինչև 1904թ.-ի մայիսի 14-ը շարունակել են դիմադրությունը: Այնուամենայնիվ, թուրքական կառավարական զինուժին ու քրդական զինված ջոկատներին հաջողվել է կոտորել մոտ 8 հազար հայ, ավերել ու կողոպտել շուրջ 2 հազար տուն: Սասունցիների հերոսական պաշտպանությունը և գերտերությունների միջամտությունը սուլթանական կառավարությանը հարկադրեցին ժամանակավորապես հրաժարվել Սասունի հայերին բնաջնջելու քաղաքականությունից:

1904 թ-ի Սասունի ապստամբությունից հետո ֆիդայական շարժումն սկսել է թուլանալ: Մնալով հիմնականում որպես առանձին խմբերի գործողություններ (1905 թ-.ի Ալվառինջի, 1907 թ-ի Սուլուխի կռիվները)՝ հայդուկային շարժումն անկում է ապրել: Շարժման ելքը կանխորոշել են գործողությունների միասնական ծրագրի բացակայությունը, ուժերը միավորելու ապարդյուն փորձերը, ինչպես նաև թշնամու ուժերի գերակշռությունը: Այդուհանդերձ, Ֆիդայական շարժումը ժողովրդին նախապատրաստել է ազատագրական պայքարի, զսպել է թուրք պաշտոնյաներին ու քուրդ աղաներին, մեղմել և նույնիսկ վերացրել է նրանց գործադրած բռնությունները: Հայ ժողովուրդը փառաբանել է ֆիդայիների հերոսությունը, երգեր հյուսել նրանց մասին: Նրանց բանաստեղծություններ են ձոնել Դ. Վարուժանը, Ա. Իսահակյանը, Հ. Թումանյանը, իսկ Խաչիկ Դաշտենցը «Ռանչպարների կանչը» վեպում արտացոլել է հայտնի ֆիդայիների կերպարները: Հայ նկարիչներն ու քանդակագործները կերտել են հայրենասեր քաջերի բազմաթիվ կտավներ և քանդակներ:

Айк Шахбазян, Фидаинские движении в 1880 - 1907 годах, – В статье в общих чертах представлено движение фидаинов как выражение возмущения коренного населения Западной Армении против векового насилия курдов и турецкого государства с 80-ых годов 19 века до 1907 года. Говорится о необходимости этой борьбы, о противоречиях внутри движения, об организационных задачах и его важности в истории армянского народа.

Haik Shahbazyan, Armenian Fedayeen movement in 1880 -1907, – The article embarks on a general discussion on the Armenian fedayeen movement known to have unfolded in the 80s of the 19th century up to 1907. As such, the text presents the movement as an expression of a rebellious protest against the centuries-old brutalities on part of the Ottoman State and the Kurdish people. It presents arguments on why the struggle was necessary; touches upon some of the internal contradictions within the movement, as well as some of its organizational shortcomings; and concludes with reflections regarding the importance of the movement for Armenian History.

Հայկ Շահբազյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ: